ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2007 թվականի փետրվարի 27-ին

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Գործատուների հանրապետական միությունը

1. Գործատուների հանրապետական միությունը՝

1) իրավունք ունի եզրակացություն ներկայացնելու աշխատանքային օրենսդրությանը վերաբերող նախագծերին կամ գործող օրենսդրության մեջ կատարվող փոփոխություններին.

2) սոցիալական գործընկերության մակարդակում ներկայացնում է հանրապետության գործատուներին:

~~2. Գործատուների հանրապետական միության նախագահն իրավունք ունի մասնակցելու Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի աշխատանքային օրենսդրության և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարցերի քննարկումներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:~~